ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԵՎ ԻՏԱԼԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՄԻՋԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտեն և Իտալիայի Հանրապետության ազգային հետազոտական խորհուրդը, այսուհետև՝ «Կողմեր»,

հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտեի և Իտալիայի Հանրապետության ազգային հետազոտական խորհրդի միջև 2018 թվականի հուլիսի 31-ին ստորագրված գիտության և տեխնոլոգիաների ոլորտներում համագործակցության մասին փոխըմբռնման հուշագրի (այսուհետև՝ «Փոխըմբռնման հուշագիր») 2-րդ և 6-րդ հոդվածների դրույթները՝

համաձայնեցին հետևյալի շուրջ.

Հոդված 1. Համագործակցության իրականացման ձևերը

Կողմերը կնպաստեն հայ և իտալացի հետազոտողների և հետազոտական կենտրոնների միջև համագործակցության զարգացմանը, որը կիրականացվի համատեղ հետազոտական ծրագրերին աջակցություն տրամադրելու ձևով:

Համագործակցությունը կընդգրկի հետևյալ հետազոտական ոլորտները՝

- ֆիզիկա և աստղաֆիզիկա,

- մոլեկուլային կենսաբանություն,
- քիմիա,
- գյուղատնտեսական գիտություններ,
- տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ,
- հնագիտություն,
- արվեստագիտություն:

Հոդված 2. Համատեղ ծրագրեր

Համագործակցության այս ձևը կիրականացվի հետևյալ կերպ՝

1. Կողմերը կաջակցեն կոնկրետ թեմաների ուղղությամբ նախապես փոխադարձ համաձայնեցված տարեկան մինչև 5 (հինգ) համատեղ հետազոտական ծրագրերի իրականացմանը: Ծրագրերում կընդգրկվեն գիտնականներ յուրաքանչյուր կողմից: Համատեղ հետազոտական ծրագրի կատարման ժամկետը 2 (երկու) տարի է:
2. Համատեղ հետազոտական ծրագրերի հայտերի մրցույթը կհայտարարվի երկու տարին մեկ պարբերականությամբ, փետրվար կամ մարտ ամիսներին: Հայտերի առաջին մրցույթը կհայտարարվի 2019 թվականի մարտին, իսկ հայտերի ընդունման վերջնաժամկետը կլինի 2019 թվականի հունիսի 30-ը:
3. Ակնկալվում է, որ համատեղ հետազոտական ծրագրերը կմեկնարկեն 2020 թվականի հունվարի 1-ից:
4. Կողմերը՝ ա) կհավաքագրեն բոլոր հայտերը, բ) հայտերը փորձաքննության կենթարկեն առանձին-առանձին և գ) կփոխանակեն բարձր միավորներ ստացած հայտերի ցանկը երկու տարին մեկ պարբերականությամբ՝ դեկտեմբերի սկզբին:
5. Փոխադարձ համաձայնեցված և բարձր միավորների արժանացած համատեղ հետազոտական ծրագրերի ցանկը կկցվի սույն Համագործակցության ծրագրին:

Հոդված 3. Ֆինանսական աջակցություն

Հաստատված համատեղ հետազոտական ծրագրերի ֆինանսավորման պայմանները հետևյալն են՝

1. Կողմերը համաձայնում են ծրագրերի հավասար հիմքերով ֆինանսավորմանը՝ ելնելով Կողմերի ֆինանսական հնարավորություններից:

2. Յուրաքանչյուր ծրագրի համար Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտեն հայաստանյան խմբին տարեկան կհատկացնի մինչև 5000 եվրոյին համարժեք ՀՀ դրամ, Իտալիայի Հանրապետության ազգային հետազոտական խորհուրդը իտալական խմբին կտրամադրի մինչև 5000 եվրո:

3. Մասնակիցների գործուղումները (օտարերկրյա և ներքին) և կեցության ծախսերը կկատարի ուղարկող Կողմը:

4. Հետազոտական խմբերին Կողմերի հատկացրած աջակցությունը լրացուցիչ օժանդակություն է ունեցած հիմնական հնարավորություններին և նախատեսված է աջակցելու ծրագրերի միջազգային բնույթով պայմանավորված օտարերկրյա գործուղումների ընդհանուր ծախսերը հոգալուն (հիմնականում ճանապարհածախսը և օրապահիկը): Յուրաքանչյուր հետազոտական խումբ կարող է դիմել այլ հաստատություններ լրացուցիչ ֆինանսավորման համար:

5. Կողմերը կվերանայեն հատկացումների չափը՝ գնաճի և յուրաքանչյուր երկրում առկա իրավիճակին համապատասխան:

Հոդված 4. Բժշկական ապահովագրություն

1. Գործուղվող անձը պետք է ունենա ապահովագրություն, որը կշնորհի նրան հյուրընկալող երկրում անվճար բժշկական օգնություն ստանալու հնարավորություն: Հյուրընկալող երկիր այցի ընթացքում դժբախտ պատահարների դեպքում համապատասխան ապահովագրության տրամադրման պատասխանատվությունը կրում է ուղարկող Կողմը:

2. Ընդունող Կողմն անհրաժեշտության դեպքում գործուղվողին կտրամադրի անհրաժեշտ

կազմակերպչական աջակցություն:

Հոդված 5. Եզրափակիչ դրույթներ

1. Սույն Համագործակցության ծրագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և վավեր է Փոխըմբռնման հուշագրի գործողության ժամկետի ողջ ընթացքում:
2. Սույն Համագործակցության ծրագրում Կողմերի գրավոր համաձայնությամբ կարող են կատարվել փոփոխություններ: Այդ փոփոխություններն ուժի մեջ են մտնում համաձայն սույն Հոդվածի 1-ին պարբերությամբ սահմանված դրույթների:

Կատարված է Երևանում, 2019 թվականի հունվարի 25-ին, երկու բնօրինակից՝ հայերեն, իտալերեն և անգլերեն, ընդ որում՝ բոլոր տեքստերը հավասարազոր են: Սույն Համագործակցության ծրագրի մեկնաբանման ժամանակ տարաձայնություններ առաջանալու դեպքում նախապատվությունը տրվում է անգլերեն տեքստին:

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտեի կողմից	**Իտալիայի Հանրապետության ազգային հետազոտական խորհրդի կողմից**
Պրոֆ. Սամվել Հարությունյան	**Պրոֆ. Մասիմո Ինգուշո**